



**«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
հասարակական կազմակերպության առաջարկությունները և
դիտողությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 5-րդ հոդվածի առաջին կետի չորրորդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ զ. կետով՝

«զ. գնման միևնույն գործընթացին միաժամանակ մասնակցել են միևնույն անձի կողմից հիմնադրված կամ ավելի քան 50% իրեն պատկանող բաժնեմաս ունեցող մեկից ավելի կազմակերպություններ:»

2. Նախագծի հոդված 15-ի երկրորդ կետի 9) ենթակետը տեղափոխել հոդված 16:
3. Նախագծի հոդված 15-ի երկրորդ կետի 10) ենթակետը տեղափոխել հոդված 52:
4. Նախագծի հոդված 15-ի երկրորդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10) կետով՝

«10) համագործակցելով տարածքային կառավարման մարմինների հետ՝ հավաքագրում է տվյալներ և դրանց հիման վրա հրապարակում է տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային հիմնարկների գնումների տարեկան հաշվետվություն:»

5. Նախագծի հոդված 15-ի երկրորդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11) կետով՝



«11) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և հրապարակում է մրցույթի հանձնաժողովի գործունեության կարգը խախտած մրցույթների հանձնաժողովների անդամների ցուցակը:»

6. Նախագծի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1) կետով`

«2.1) առնվազն եռամսյակային պարբերականությամբ կազմակերպում է կլոր սեղաններ և քննարկումներ ընկերությունների և կազմակերպությունների հետ.»

7. Նախագծի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2) կետով`

«2.2) տարեկան կտրվածքով ներկայացնում է հանրային գնումներում առնվազն մեծ տեսակարար կշիռ կազմող ապրանքների միջին շուկայական գների, մաքսային արժեքների համեմատական վերլուծության արդյունքները.»

8. Նախագծի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1) կետով`

«6.1) Լիազոր մարմնի կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա վերլուծության է ենթարկում պատվիրատուների կողմից «դրամ արժեքի դիմաց» սկզբունքի կիրառման պրակտիկան և հրապարակում է վերլուծության արդյունքները.»

9. Նախագծի 17-րդ հոդվածի առաջին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6) ենթակետով`

«6) հոլանդական աճուրդ:»



10. Նախագծի 23-րդ հոդվածի առաջին կետի առաջին ենթակետում «միայն մեկ» բառերից հետո լրացնել «ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ հանդիսացող» բառերով:

11. Նախագծի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1) կետով`

«1.1 Հանձնաժողովի կազմը փոփոխվում է ռոտացիոն կարգով:»

12. Նախագծի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2) կետով`

«1.2 Խոշոր գնումների դեպքում հանձնաժողովի կազմում ներգրավվում են նաև գնման առարկայի գծով փորձագետներ:»

13. Նախագծի 25-րդ հոդվածի երկրորդ կետի վեցերորդ ենթակետի վերջում ավելացնել «ծանուցում է մրցույթի բոլոր մասնակիցներին բողոքարկման հնարավորության և ընթացակարգերի մասին.» բառերով:

14. Նախագծի 25-րդ հոդվածի երկրորդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9), 10) և 11) ենթակետերով`

«9) հայտերի ներկայացման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսով կամ ինտերնետի միջոցով հիշեցնում է մրցույթի մասնակիցներին հայտերի ներկայացման օրվա մասին.

10) հերթական համարներով համարակալում է ստացականները և ստուգում է հայտի մասնակցության անդորրագրերը.

11) սղագրում է մրցույթի հանձնաժողովների նիստերը:»

15. Նախագծի 30-րդ հոդվածի երկրորդ կետի երկրորդ նախադասության մեջ «կազմվում են» բառերից հետո «երկու» բառով, իսկ «և հրավերում նշված թվով



պատճեններից:» բառերը փոխարինել «, որոնցից մեկը պետք է առանց բացվելու պահվի արխիվում և ստուգվի միայն հսկողություն իրականացնող մարմինների կողմից:» բառերով:

16. Նախագծի 33-րդ հոդվածի երկրորդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1) ենթակետով`

«4.1) տեղեկություններ մրցույթի հանձնաժողովների և մրցույթի մասնակիցների առնչությամբ շահերի բախման և փոխկապակցված անձանց բացակայության մասին.»

17. Նախագծի 34-րդ հոդվածի առաջին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1) ենթակետով`

«1.1) մրցույթի հաջորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներին գրավոր պարզաբանություն է տրվում իրենց զբաղեցրած տեղի հիմնավորմամբ:»

18. Նախագծի 36-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1. կետով`

«1. Նախքան պայմանագրի կնքումը, մրցույթի հանձնաժողովը հաղթող ճանաչված մասնակցի տվյալներն ուղարկում է համապատասխան պետական մարմիններ և վերջիններիս կողմից հաստատվելու դեպքում` մրցույթի հանձնաժողովը որոշում է ընդունում ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:»

Այս կապակցությամբ 36-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը դառնում են համապատասխանաբար 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր



19. Նախագծի 52-րդ հոդվածի առաջին կետի երկրորդ նախադասության մեջ «հասարակական կազմակերպությունների» բառերը լրացնել «և կապալառուների միավորումների» բառերով:
20. Նախագծի 52-րդ հոդվածի չորրորդ կետը լրացնել «Մրցույթի հանձնաժողովի գործողությունների կամ անգործության դեմ ուղղված բողոքի բավարարման դեպքում գնումների բողոքարկման խորհուրդը լիազոր մարմնին և պատվիրատուին առաջարկներ է ներկայացնում մրցույթի հանձնաժողովի անդամների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու առնչությամբ:»